ՄԱՏԵՄԱՏԻԿԱ 5-րդ ԴԱՍԱՐԱՆ
ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ՓՈՒԼ 2022-2023

Տևողությունը 2 ժամ 30 րոպե

1. Քանի՞ երկնիշ թիվ կա, որոնցից յուրաքանչյուրը 3-ի և 4-ի բաժանելիս մնացորդներում ստացվում են տարբեր թվեր։

2. Եթե քառանիշ թիվը բազմապատկենք 4-ով, ապա կստանանք նույն թվանշաններով կազմված, բայց հակառակ կարգով դասավորված քառանիշ թիվ։ Գտնել սկզբնական քառանիշ թիվը։

3. Դասարանը զարդաված է կարմիր, կապույտ և նարնջագույն փուչիկներով։ Կապույտ փուչիկ 3 անգամ շատ էին գնել՝ քան նարնջագույն, և 2 անգամ քիչ՝ քան կարմիր։ Զարդարելիս փուչիկների մի մասը պայթել էր։ Կապույտ փուչիկ 2 անգամ շատ է պայթել՝ քան կարմիր, և 3 անգամ քիչ՝ քան նարնջագույն։ Նվազագույնը քանի՞ փուչիկով է զարդարված դասարանը։

4. Գրատախտակին գրված են 1-ից մինչև 7 բոլոր բնական թվերը։ Արմենն ընտրում է այդ թվերից մի քանիսը, և ընտրած թվերից յուրաքանչյուրից հանում միևնույն բնական թիվը։ Այդ քայլը նա կատարում այնքան անգամ մինչև բոլոր թվերը հավասարվեն 0-ի։ Ամենաքիչը քանի՞ անգամ նա այդ քայլը պետք է կատարի։

(ԲՈԼՈՐ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԼՈՒԾՈՒՄՆԵՐԸ ՊԵՏՔ Է ՀԻՄՆԱՎՈՐԵԼ)